ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (*հեղինակային հրատարակություն), Ե., 2010, 202 էջ:*



Հայ ժողովրդի ջերմ ու անմոռաց բարեկամներից մեկը՝ ռուս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին (1884–1967 թթ.) իր հայանպաստ ակտիվ գործունեությամբ անջնջելի հետք է թողել հայոց սերունդների հավաքական հիշողության մեջ: Ուստի հայ իրականության մեջ միանգամայն օրինաչափ է այն մշտական հետաքրքրությունն ու երախտագիտությունը, որն անընդմեջ առկա է նրա անվան, կյանքի և հիշատակի շուրջ:

Վերոնշյալի շրջանակում պետք է դիտարկել անվանի գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանի հեղինակած «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում» ուշագրավ աշխատությունը, որը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հայաստանի և հայկական իրականության հետ Գորոդեցկու ունեցած առնչությունների վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել գրականագետներ Ս. Արզումանյանը, Յու. Դարոնյանը, Մ. Ամիրխանյանը, պատմաբաններ, ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը, Ա. Մնացականյանը, ռուս հետազոտողներ Ս. Մաշինսկայան, Տ. Նիկոլսկայան: Նրանք, սակայն, հիմնականում անդրադարձել են ռուս բանաստեղծի ստեղծագործություններին և միայն հպանցիկ՝ Անդրկովկասում վերջինիս գործունեությանը:

Եվ միայն Ա. Զաքարյանի հեղինակած սույն աշխատությամբ առաջին անգամ և հանգամանորեն ներկայացվում է Ս. Գորոդեցկու հասարակական-քաղաքական և գրական-մշակութային գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում: Աշխատությունը բաղկացած է յոթ գլուխներից, ներածական խոսքից ու վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Սույն աշխատության արժեքավոր կողմերից է այն հանգամանքը, որ հեղինակը հավասարապես ուշադրություն է դարձնում Գորոդեցկու՝ ինչպես ստեղծագործական ներաշխարհի բացահայտմանը, այնպես էլ մանրամասն փաստարկում է նրա հասարակական-քաղաքական գործունեության փուլերն ու կարևորագույն դրվագները: Ընթերցող հանրության առջև ամբողջական դիմաքանդակով հառնում է Գորոդեցկի-ռազմաճակատային ու հասարակական-քաղաքական գործիչը: Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Հայաստանի հրեշտակը» գրքույկը և հոդված-ակնարկները, «Հայաստանը և Հայկական հարցը Ս. Գորոդեցկու հրապարակախոսության մեջ», «Երևանյան օրեր», «Արժեքների վերագնահատման ճանապարհին» խորագրերով բաժինները:

Բարեխիղճ հետազոտողի հմտությամբ Ա. Զաքարյանը փաստաբաստ համոզչությամբ բացահայտում է հայկական իրականության մեջ Գորոդեցկու ունեցած կապերի ու ազդեցությունների ողջ համապատկերը՝ պատմական դարաշրջանին բնորոշ կոլորիտով: Հայ գրականության մեծերի հետ ունեցած հանդիպումների ջերմ տպավորություններով Գորոդեցկին 1916 թ. ապրիլի վերջերին Թիֆլիսից մեկնում է գործող բանակ՝ Արևմտահայաստան, Վան: Նրան սպասվում էր ահավորը. տեսնել, զգալ ու կրել դանթեական դժոխքի բոլոր սարսափները: Նա անցնում էր պատերազմական արյան և ավերի թարմ հետքերով, անթաղ դիակների, մարդկային ոսկորների, մեռյալ, անշունչ գյուղերի ու քաղաքների միջով: Այնուհետև՝ մինչև իր կյանքի ավարտը, Գորոդեցկուն ուղեկցելու էին հայ ժողովրդի արյունոտ, եղեռնոտ գողգոթայի զարհուրելի պատկերները: Ռուս մեծ մարդասերը այդ օրերին հետևյալն է գրառում. «Այն զգացումը, որով համակված կանգնում ես ջարդ ու ավերմունքի վայրում, ոչ մի բանի հետ չի կարող համեմատվել վշտի և ցավի ուժով: Անուղղելի չարիք, անջնջելի խայտառակություն, անզոր ցասում մարդկային հոգուն հասցված անարգանքի համար – ահա այն առաջին զգացումները, որ հարուցում է Թուրքիան» (էջ 18):

Աշխատության էջերում խորությամբ լուսաբանվում են Գորոդեցկու անձնազոհ ջանքերն ու ճիգերը՝ մահվան ճիրաններից ազատելու և փրկություն պարգևելու բազմահազար գաղթականների՝ հատկապես որբ երեխաներին: Ի դեպ, նա միանշանակ շեշտադրում է, որ ազգային բնազդով Հայաստանն իր բոլոր աղետների ժամանակ առանձնահատուկ սիրով և հոգատարությամբ է վերաբերվում երեխաներին: Որպես դեպքերի մասնակից և ականատես՝ ռուս գործիչը հետևյալն է արձանագրում. «Ամեն անգամ ռազմաճակատում պետք էր տեսնել հապճեպորեն կազմակերպվող այդ մանկական սայլախմբերը, մանկական ապաստարանները, երբ ինչ-որ քաղաք էր ավերվում, այդ դաստիարակչուհիներին, դայակներին և հատկապես մանկավարժ երիտասարդներին՝ հասկանալու համար, թե ինչպես է աղետի զգացումը հրաշալի կերպով վերաձուլվում որբերի հանդեպ սի-րո: …Տարածքից զրկված, իր վաղեմի բնակության վայրերից քշված փախստական ժողովուրդը, բնականաբար, իր ապագան տեսնում է երեխաների մեջ» (էջ 93): Հիրավի, օտարազգի գործիչը ճիշտ է հասկացել մեր ժողովրդի հոգեկան կերտվածքին ու ազգային նկարագրին բնորոշ կողմերն ու բուն էությունը:

Գրքում լուսաբանվում են վերոնշյալ տագնապալից դարաշրջանում Գորոդեցկու շփումներն ու առնչությունները հայ իրականության անվանի գործիչների հետ: Այս առումով հատկապես կարևորվում է Հովհաննես Թումանյանի և Ս. Գորոդեցկու ունեցած մտերմիկ առնչությունների վերծանումը: Հետազոտողն իրավացիորեն նշում է, որ այդ երկու մեծ անհատների հարաբերությունները բարեկամական էին, խորապես մարդկային, և դա ընկերություն էր՝ լուսավորված ռուս և հայ ժողովուրդների պատմական փորձությունների խոր գիտակցումով: Թումանյանը 1918 թ. հունվարի 3-ին հանդես եկավ «Բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն» հոդվածով, որում խոր անհանգստություն և տագնապ էր արտահայտում Կովկասյան ճակատից ռուսական բանակի հեռանալու առնչությամբ: Նա, դիմելով ռուս գործչին՝ որպես ռուս բանաստեղծի և ռուս ժողովրդի հոգու մեկնիչի, ասում է. «Ձեր աչքերի առաջ այստեղ Կովկասում տեղի է ունենում չափազանց տարօրինակ երևույթ: …Ռուսական բանակը, որ հաղթականորեն մտել է թշնամու երկրի խորքը և դարձել դրության տերը, սկսում է նահանջել ոչ միայն ռազմադաշտից, այլև լքել նույնիսկ Կովկասը: Ռուսաստանն ավելի քան մի հարյուրամյակի ընթացքում միլիարդներով փող է գործադրել և անհամար հերոսական պատերազմներում մի-

լիոնավոր կյանքեր գոհաբերել և ստեղծել լայնածավալ մի պետություն, որ այժմ դարձել է ռուսական մեծ հանրապետություն:

Ի՞նչ եք կարծում, ոչ մի կապ չկա՞ այն միլիոնավոր ռուս մարդկանց և այժմյան ռուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ռուս մարդիկ, որ դեռևս կանգնած են պատմական եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգությունից, Արևելքում իրենց գրաված դիրքից և իրենց ազգային մեծ միսիան կատարելուց» (էջ 87):

Սույն տողերը վկայում են, թե Ամենայն հայոց բանաստեղծը որքան է կարևորել Ռուսաստանի ներկայությունը այս տարածաշրջանում և նրա դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Միաժամանակ պետք է նշել, որ Թումանյանը դիտարկում է երկու Ռուսաստանների (դեմոկրատական և ցարական) գոյությունն ու գործառույթները:

«Պատասխան Հովհաննես Թումանյանին» հոդվածում Ս. Գորոդեցկին այսպես է սկսում. «Թանկագին Հովհաննես Թադևոսի: Կարծես թե Մասիսի գագաթից, որտեղ օդը մաքուր է և երկինքը մոտիկ, հնչեց Ձեր ձայնը դեպի ինձ՝ ռուսական հարթավայր, որը հիմա նման է մեռյալների գետի՝ Ստիքսի հովտին: Եվ ես ուրախությամբ գրիչ եմ վերցնում Ձեզ պատասխանելու համար: Քանզի ողջ Ռուսաստանը, նրա բոլոր անեծքները, նրա ողջ տառապանքը, ինչպես և բոլոր հույսերը կրում եմ իմ մեջ և ամենօրյա մտորումներով տեսնում ապագան, որը նախագծում եմ որպես ամենապայծառ, ուշի ուշով լսում եմ ներկան և նրանից ելք եմ փնտրում» (էջ 88):

Գորոդեցկին հպարտությամբ նշում է, որ Թումանյանի նամակն ընդունում է որպես Հայաստանի և Ռուսաստանի միջև բարեկամության և եղբայրության ակտ՝ ամրապնդված պատերազմի և հեղափոխության արյամբ:

Հովհ. Թումանյանի հրապարակային նամակն ու Ս. Գորոդեցկու պատասխանը լայն արձագանքներ են գտնում հայ, ռուս և վրացի մտավորականության շրջանում, քննարկվում տարբեր պարբերականների էջերում:

Քննելով Գորոդեցկու հրապարակախոսական գործունեության բոլոր փուլերն ու դրվագները՝ աշխատության հեղինակը այդ շարքում առանձնացնում է «Վերջին ճիչը» վերնագրով հուզիչ և մարդկային հոգին ալեկոծող հոդվածը:

Սակայն Գորոդեցկին ոչ միայն հոդվածներ է գրել, այլև հրապարակային ելույթներ ունեցել Հայկական հարցի և Հայաստանի ազատագրության շուրջ: Այդպիսի մի կարևոր ելույթ նա ունեցել է 1919 թ. հուլիսի կեսերին՝ Բաթումում, և որի մասին երկար ժամանակ ոչինչ հայտնի չէր:

Եվ ահա սույն աշխատության շնորհիվ մենք տեղեկանում ենք Բաթումում Գորոդեցկու դասախոսության ծրագրային դրույթների մասին: Նրանում ռուս գործիչը շոշափում է հետևյալ ճակատագրական հարցադրումները. 1) Ընդունա՞կ է հայ ազգը ինքնուրույն գոյության, 2) Հայաստանի երկու մասերի՝ Ռուսաստանի և Տաճկաստանի միացման անհրաժեշտու- թյունը մի պետություն կազմելու համար, 3) Գյուղատնտեսություն և առևտրաարդյունաբերություն: Ժողովրդական գեղարվեստ և գրական գեղարվեստ, 4) Մշակութային կապ Ռուսաստանի հետ, 5) Եվրոպական պետությունների հովանավորությունների վնասն ու օգուտը և այլն:

Ամփոփելով պիտի գոհունակությամբ նշենք, որ սույն մենագրությամբ գիտական ճշմարիտ սկզբունքայնությամբ կերտվել է մեծ մարդասեր, հայ ժողովրդի անշահադետ բարեկամ ու աջակից Սերգեյ Գորոդեցկու բազմակողմանի կերպարը՝ որպես անվանի հասարակական և մշակութային գործչի, ժողովուրդների միջև համագործակցության ու բարեկամության ջատա-

գովի, ընդդեմ պատերազմի, բռնության ու նախճիրի պայքարող անհատի և վերջապես գրողի, բանաստեղծի, հրապարակախոսի և թարգմանչի:

Նաև սույն աշխատության միջոցով և նրա շնորհիվ ռուս մարդասեր գործչի կերպարը հավերժ կմնա հայոց երախտապարտ սերունդների հիշողության մեջ:

Եվ Անուշավան Զաքարյան գիտնականի հեղինակած այս մենագրությունը, որը նախատեսված է գրականագետների, պատմաբանների և ընթերցող լայն հանրության համար, արժանի լուսապսակ է նրա բյուրեղյա հիշատակին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.
Պատմական գիտությունների թեկնածու